ԵԴ1/2219/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 հունվարի 2025 թվական | ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/2219/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 1995 թվականի փետրվարի 20-ին Երևան քաղաքի Մաշտոցի շրջանի ժողդատարանում ստացվել է թիվ 90208894 (1-51/1995) քրեական գործն ըստ

մեղադրանքի՝ Դավիթ Կառլոսի Առաքելյանի՝ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 214-րդ հոդվածի 1-ին մասով և այլոց:

Երևան քաղաքի Մաշտոցի շրջանի ժողդատարանի՝ 1995 թվականի մայիսի 30-ի որոշմամբ քրեական գործը Դավիթ Կառլոսի Առաքելյանի մասով կասեցվել է, վերջինիս նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխվել է կալանքով և հայտարարվել է հետախուզում:

1.1. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ.Բալայանի՝ 2009 թվականի մարտի 27-ի որոշմամբ կասեցված քրեական գործն (ԵԱԴԴ/0018/01/08) ընդունվել է վարույթ:

2015 թվականի մարտի 9-ին թիվ ԵԱԴԴ/0018/01/08 քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Տ.Գրիգորյանին և նույն օրը որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2019 թվականի հունիսի 4-ին թիվ ԵԱԴԴ/0018/01/08 քրեական գործը վերաբաշխվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ.Պապոյանին և հունիսի 5-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2022 թվականի դեկտեմբերի 21-ին թիվ ԵԱԴԴ/0018/01/08 քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Ա.Դանիբեկյանին և 2022 թվականի դեկտեմբերի 22-ին որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

1.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի հունիսի 30-ի որոշմամբ թիվ ԵԱԴԴ/0018/01/08 քրեական գործի վարույթը վերսկսվել է:

2024 թվականի սեպտեմբերի 9-ին թիվ ԵԴ1/2219/01/24 (ԵԱԴԴ/0018/01/08) քրեական վարույթը վերաբաշխվել է դատավոր Հ.Ավագյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 12-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2219/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի նոյեմբերի 5-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2219/01/24 քրեական վարույթը հեռակա կարգով իրականացնելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 16-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2219/01/24 քրեական վարույթն ըստ ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 27-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2219/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունվարի 16-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Դավիթ Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա, որպես զինապարտ հաշվառման կանգնած լինելով Մաշտոցի շրջանի զինկոմիսարիատում, 1994 թվականի հոկտեմբերի 17-ին նույն զինկոմիսարիատի կողմից զորակոչվել է 3-ամսյա ուսումնավարժական հավաքների և ծառայությունը կրելու համար նույն օրը զինվորական ոստիկանության ուղեկցությամբ խմբի կազմում ավտոբուսով ուղարկվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Հասնելով Սիսիանի մուտքայքում գտնվող «դարպասներ» կոչվող հուշարձանի մոտ ավտոբուսը կանգ է առել կարճատև դադարի և Առաքելյանը տուալետ գնալու պատրվակի տակ հարմար պահ ընտրելով, վարժահավաքից խուսափելու նպատակով դիմել է փախուստի և վերադարձել տուն: (…)»*[1]:

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 247:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Դավիթ Առաքելյանին մեղսագրվող 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը փաստացի ավարտվել է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում, որպիսի հանգամանքը հաշվի առնելով, Դատարանը փաստում է, որ մեղսագրված ենթադրյալ արարքը կատարվել ու ավարտվել է Սյունիքի մարզի դատական տարածքում:*

(…)

Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունը՝ Դատարանը գտնում է, որ սույն քրեական վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում անխուսափելիորեն կհանգեցնի մեղադրյալ Դավիթ Առաքելյանի և դատավարության մյուս մասնակիցների արդար դատական քննության հիմնարար իրավունքի խախտման, իսկ արդյունքում կայացված դատական ակտը ցանկացած դեպքում ենթակա կլինի բեկանման:

Հետևաբար, անհրաժեշտ է թիվ ԵԴ1/2219/01/24 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Դավիթ Կառլոսի Առաքելյանի՝ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ ընդդատության ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»[2]:

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) 1994 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ ՊՆ զինվորական ոստիկանության աշխատակիցները Դավիթ Կառլոսի Առաքելյանին բերման են ենթարկել ոստիկանության հերթապահ մաս:*

Դավիթ Կառլոսի Առաքելյանին, Երևան քաղաքում, ոստիկանության կողմից բերման ենթարկելու հանգամանքը հաստատվել է նաև մեղադրյալի որպես վկա հարցաքննության արձանագրությամբ:

Այլ կերպ՝ Դավիթ Կառլոսի Առաքելյանի կողմից առերևույթ հանցանքի կատարումը ավարտվել է իրավապահ մարմինների միջամտությամբ՝ Երևան քաղաքում՝ վերջինիս բերման ենթարկելու պահին:

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 33-36:

Դատարանն արձանագրում է, որ տվող հանցանքի ավարտի պահը պայմանավորող այլ հանգամանքներն իրենց բնույթով հանդիսանում են ապացուցողական վիճակներ, որոնք հիմնվելով տարաբնույթ գործոնների վրա կանխորոշում են ընթացքի մեջ գտնվող հանցավոր դրսևորման ավարտը: (...)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2219/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 42-48:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը: (…)»:

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Զինապարտի խուսափելը վարժական կամ ստրուգողական հավաքներից՝ (…)»:*

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- սույն քրեական գործն առաջին ատյանի դատարան է ստացվել 1995 թվականի փետրվարին, նույն թվականի մայիսին ամբաստանյալ Դ.Առաքելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, հայտարարվել է հետախուզում և նրա մասով գործի վարույթը կասեցվել է: Դրանից հետո քրեական գործը հինգ անգամ վերաբաշխվել է, քրեական գործի վարույթը վերսկսվել է և 2024 թվականի նոյեմբերի 5-ին որոշում է կայացվել տվյալ քրեական վարույթը հեռակա կարգով իրականացնելու մասին: Այնուհետև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Դ.Առաքելյանին վերագրվող ենթադրյալ հանցանքը փաստացի ավարտվել է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[7]:

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Դ.Առաքելյանին վերագրված ենթադրյալ հանցանքն ավարտվել է իրավապահ մարմինների միջամտությամբ՝ Երևան քաղաքում վերջինիս բերման ենթարկելով, գտել է, որ սույն քրեական գործն ընդդատյա չէ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[8]:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Դ.Առաքելյանին վերագրված ենթադրյալ արարքը՝ որպես տևող հանցանք, ավարտվել է 1994 թվականի նոյեմբերի 9-ին, Երևան քաղաքում՝ նրան բնակության վայրից զինվորական ոստիկանության աշխատակիցների կողմից զինվորական ոստիկանություն բերման ենթարկելով[9]: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Դ.Առաքելյանին վերագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տևող ենթադրյալ հանցանքն ավարտվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

16. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2219/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/2219/01/24 վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 3-4:

Ո Ր Ո Շ Ե Ց

Դավիթ Կառլոսի Առաքելյանի վերաբերյալ՝ 1961 թվականի մարտի 7-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ԵԴ1/2219/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ